.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 17.3-րդ կետի 27-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) նախագահի 31.03.2016թ. թիվ 106-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հասարակական պաշտոնների նշանակման և ազատման վերաբերյալ» կարգի 1.3 կետի և 11.11.2013թ. թիվ 39-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի կանոնակարգի» 3.2 կետի պահանջներով,

հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախորդ կազմի լիազորությունները դադարել են,

ՈՐՈՇԵՑԻ՝

1. Երկու տարի ժամկետով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի նախագահ նշանակել փաստաբան Ինեսսա Պետրոսյանին:

2. Երկու տարի ժամկետով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի անդամներ նշանակել փաստաբաններ՝

- ***Ռուզաննա Ազրոյանին,***
- ***Աշոտ Խլոյանին,***
- ***Դավիթ Սրապիոնյանին,***
- ***Կարո Ասատրյանին,***
- ***Վահե Տիգրանյանին,***
- ***Զարուհի Հայրապետյանին:***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

10-ը մայիսի 2016թ.
թիվ 149-Ա
ք. Երևան